3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն ----- տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1 (մեկ) տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարին:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 3) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության _____ օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _____ օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային

օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-
ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված
պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության
կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով
ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված
աշխատանքներն ընդունվելու դեպքում:

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց
հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության
կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված
հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրա-
պետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման
համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության
օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց
հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական
օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի
պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է
պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման
ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն
չի ստորագրվում:

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն
ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝
Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված
աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու
դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ
շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝
ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և
դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և
չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների
և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները
կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող
նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----- (-----) ՀՀ
դրամ, որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է
Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Թալին-Գյումրի
(Տրանշ 3) ճանապարհահատվածի ջրատարերի տեղափոխման աշխատանքներ,
(.....) ՀՀ դրամ՝ որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Չափաբաժին 2՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Թալին-Գյումրի (Տրանշ 3) ճանապարհահատվածի էլեկտրական գծերի տեխսփոխության աշխատանքներ, (.....) ՀՀ դրամ՝ որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

Չափաբաժին 3՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Թալին-Գյումրի (Տրանշ 3) ճանապարհահատվածի գազատարների վերատեղադրման աշխատանքներ, (.....) ՀՀ դրամ՝ որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն

4-րդ չափաբաժին՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Թալին-Գյումրի (Տրանշ 3) ճանապարհահատվածի կապի տեխսփոխման աշխատանքներ, (.....) ՀՀ դրամ՝ որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.1 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ _____ ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման տարվա դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է⁶.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

⁶ Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով⁷:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

⁷ Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ փարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում⁸:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած

⁸ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:

պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները⁹:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Պատվիրատուի հասցեն>>

<<Պատվիրատուի բանկը>>

Հ/Հ -----

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՐՈՒ

<<Կապալառուի հասցեն>>

<<Կապալառուի բանկը>>

Հ/Հ -----

(ստորագրություն)

Կ.Տ

⁹ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համապետական գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

**ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՐԱՆՇ 3-Ի
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹԱԼԻՆ-ԳՅՈՒՄՐԻ (ԹԱԼԻՆ-ԼԱՆՋԻԿ ԵՎ ԼԱՆՋԻԿ-ԳՅՈՒՄՐԻ)
ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՌԿԱ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՂԻՆԵՐԻ՝ ԿԱՊԻ ՄԱԼՈՒԽՆԵՐԻ, ԳԱԶԱՏԱՐԻ,
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՕԴԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԵՎ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Չափաբաժին 1

**Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի շրջանակներում
Թալին-Գյումրի (Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի) ճանապարհահատվածում առկա
ջրամատակարարման խողովակների տեղափոխման աշխատանքների**

(ՀՀ դրամ)

Nº	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
1. Խմելու և ոռոգման ջրերի ջրափարների տեղափոխում					
1	IIIկ. բնահողի մշակում ձեռքով	մ ³	150	2,904	435,600
2	IIIկ. բնահողի մշակում էքսակավատորով կողքի կուտակումով	մ ³	3,880	760	2,948,800
3	IVկ. բնահողի մշակում ձեռքով	մ ³	100	5,120	512,000
4	IVկ. բնահողի մշակում էքսակավատորով կողքի կուտակումով	մ ³	2,900	986	2,859,400
5	Vկ. բնահողի մշակում ձեռքով	մ ³	50	12,510	625,500
6	Vկ. բնահողի մշակում էքսակավատորով կողքի կուտակումով	մ ³	3,230	1,330	4,295,900
7	Vկ. բնահողի մշակում էքսակավատորով բարձելով ա/ի	մ ³	1,405	1,062	1,492,110
8	Բնահողի տեղափոխում լցակայան 2կմ հեռ. վրա	տն	2,950.5	1,538	4,537,869
9	Աշխատանք լցակայանում	մ ³	1,410	150	211,500
10	Ավազակոպճային նախապատրաստում h=10սմ	մ ³	546	4,897	2,673,762
11	Պողպատե (St) էլեկտրա-եռակցվող խողովակներ Ø530x10,0 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	2,243	129,722	290,966,446
12	Պողպատե (St) էլեկտրա-եռակցվող խողովակներ Ø478x8,0 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	50	86,821	4,341,050

13	Պողպատե (St) էլեկտրա-եռակցվող խողովակներ Ø325x7,0 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	78	64,514	5,032,092
14	Պողպատե (St) էլեկտրա-եռակցվող խողովակներ Ø273x7,0 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	335	49,008	16,417,680
15	Պողպատե (St) էլեկտրա-եռակցվող խողովակներ Ø273x5,0 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	1,820	40,878	74,397,960
16	Պողպատե (St) էլեկտրա-եռակցվող խողովակներ Ø219x5,0 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	190	21,589	4,101,910
17	Պողպատե (St) էլեկտրա-եռակցվող խողովակներ Ø133x4,5 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	73	12,087	882,351
18	Պողպատե (St) էլեկտրա-եռակցվող խողովակներ Ø108x5,5 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	245	11,258	2,758,210
19	Պողպատե (St) էլեկտրա-եռակցվող խողովակներ Ø108x4,5 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	89	10,441	929,249
20	Պոլիէթիլենային եռակցվող (PE) խողովակներ Ø110x6,6	գծ.մ	1,430	4,021	5,750,030
21	Պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներ Ø89x4,5 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	430	9,088	3,907,840
22	Պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներ Ø57x3,5 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	80	5,343	427,440
23	Պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներ Ø48x3,0 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	285	4,899	1,396,215
24	Պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներ Ø32 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	105	3,824	401,520
25	Մետաղական պատյան խողովակ Ø720x7,0	գծ.մ	205	122,397	25,091,385
26	Մետաղական պատյան խողովակ Ø630x7,0	գծ.մ	38	106,370	4,042,060
27	Մետաղական պատյան խողովակ Ø530x7,0	գծ.մ	78	88,861	6,931,158
28	Մետաղական պատյան խողովակ Ø426x5,0	գծ.մ	98	57,243	5,609,814
29	Մետաղական պատյան խողովակ Ø325x5,0	գծ.մ	330	43,572	14,378,760
30	Մետաղական պատյան խողովակ Ø273x4,0	գծ.մ	104	30,489	3,170,856
31	Մետաղական պատյան խողովակ Ø219x3,5	գծ.մ	95	15,099	1,434,405
32	Սեպավոր փական Ø530, 30с 525НЖ	հատ	9	428,101	3,852,909

33	Սեպավոր փական Ø300, 30с 327НЖ	հատ	1	359,916	359,916
34	Սեպավոր փական Ø250, 30с 15НЖ	հատ	1	297,861	297,861
35	Սեպավոր փական Ø200	հատ	1	113,100	113,100
36	Սեպավոր փական Ø125	հատ	1	83,338	83,338
37	Սեպավոր փական Ø100, 30с 15НЖ	հատ	5	244,756	1,223,780
38	Սեպավոր փական Ø100, 30ч66р	հատ	2	56,621	113,242
39	Սեպավոր փական Ø80, 30с 15НЖ	հատ	2	189,159	378,318
40	Սեպավոր փական Ø50, 30с 15НЖ	հատ	5	95,000	475,000
41	Սեպավոր փական Ø50, 30ч66р	հատ	13	10,087	131,131
42	Պական Ø40, 30ч66р	հատ	1	9,385	9,385
43	Պական Ø32, 30ч66р	հատ	3	7,561	22,683
44	Վանտուզ Ø50	հատ	1	39,720	39,720
45	Վանտուզ Ø50, 40մթն. ճնշ	հատ	5	95,316	476,580
46	Պողպատե էլեկտրաեռակցվող կցաշուրթ Ø500	հատ	9	32,420	291,780
47	Պողպատե էլեկտրաեռակցվող կցաշուրթ Ø300	հատ	1	25,371	25,371
48	Պողպատե էլեկտրաեռակցվող կցաշուրթ Ø250	հատ	1	17,370	17,370
49	Պողպատե էլեկտրաեռակցվող կցաշուրթ Ø200	հատ	1	14,268	14,268
50	Պողպատե էլեկտրաեռակցվող կցաշուրթ Ø125	հատ	1	9,576	9,576
51	Պողպատե էլեկտրաեռակցվող կցաշուրթ Ø125	հատ	7	7,969	55,783
52	Պողպատե էլեկտրաեռակցվող կցաշուրթ Ø80	հատ	2	6,777	13,554
53	Պողպատե էլեկտրաեռակցվող կցաշուրթ Ø50	հատ	13	4,343	56,459
54	Ազատ կցաշուրթ Ø500	հատ	9	66,714	600,426
55	Ազատ կցաշուրթ Ø300	հատ	1	4,454	4,454
56	Ազատ կցաշուրթ Ø250	հատ	1	3,484	3,484
57	Ազատ կցաշուրթ Ø200	հատ	1	3,070	3,070
58	Ազատ կցաշուրթ Ø125	հատ	1	2,322	2,322

59	Ազատ կցաշուրթ Ø100	հատ	7	1,984	13,888
60	Ազատ կցաշուրթ Ø80	հատ	2	1,074	2,148
61	Ազատ կցաշուրթ Ø50	հատ	13	742	9,646
62	Կցաշուրթային միջադիր Ø500	հատ	9	3,892	35,028
63	Կցաշուրթային միջադիր Ø300	հատ	1	3,674	3,674
64	Կցաշուրթային միջադիր Ø250	հատ	2	2,967	5,934
65	Կցաշուրթային միջադիր Ø200	հատ	1	2,593	2,593
66	Կցաշուրթային միջադիր Ø125	հատ	2	1,893	3,786
67	Կցաշուրթային միջադիր Ø100	հատ	7	1,816	12,712
68	Կցաշուրթային միջադիր Ø80	հատ	2	930	1,860
69	Կցաշուրթային միջադիր Ø50	հատ	13	574	7,462
70	Պողպատե ձևավոր մասերի տեղադրում	տ	1.7	786,596	1,337,213
71	Պողպատե անկյունակ Ø530x10, 90°	հատ	2	82,470	164,940
72	Պողպատե անկյունակ Ø530x10, 60°	հատ	26	82,466	2,144,116
73	Պողպատե անկյունակ Ø478x8, 90°	հատ	4	53,742	214,968
74	Պողպատե անկյունակ Ø325x7, 90°	հատ	6	49,111	294,666
75	Պողպատե անկյունակ Ø273x8, 90°	հատ	4	38,730	154,920
76	Պողպատե անկյունակ Ø200, 60°	հատ	5	12,602	63,010
77	Պողպատե անկյունակ Ø100, 60°	հատ	16	5,782	92,512
78	Պողպատե անկյունակ Ø100 90°	հատ	3	5,779	17,337
79	Պողպատե անկյունակ Ø80, 90°	հատ	2	2,760	5,520
80	Պողպատե անկյունակ Ø80, 60°	հատ	20	2,761	55,220
81	Մետաղական պատյան խողովակների հիդրոմեկուսացում 2 շերտ տաք բիտումով	մ²	1,073.1	2,131	2,286,776
82	Խողովակների անցկացում պատյանի մեջ Ø530	մ	205	6,556	1,343,980
83	Խողովակների անցկացում պատյանի մեջ Ø478	մ	38	5,082	193,116

84	Խողովակների անցկացում պատյանի մեջ Ø375	մ	78	4,282	333,996
85	Խողովակների անցկացում պատյանի մեջ Ø273	մ	98	3,513	344,274
86	Խողովակների անցկացում պատյանի մեջ Ø219	մ	330	2,841	937,530
87	Խողովակների անցկացում պատյանի մեջ ØØ32-40մմ	մ	136	2,353	320,008
88	Միացում առկա ջրագծին Ø530	տեղ	21	86,202	1,810,242
89	Միացում առկա ջրագծին Ø450	տեղ	2	52,358	104,716
90	Միացում առկա ջրագծին Ø325	տեղ	2	32,172	64,344
91	Միացում առկա ջրագծին Ø270	տեղ	7	25,261	176,827
92	Միացում առկա ջրագծին Ø200	տեղ	4	18,508	74,032
93	Միացում առկա ջրագծին Ø125	տեղ	1	9,401	9,401
94	Միացում առկա ջրագծին Ø100	տեղ	11	8,920	98,120
95	Միացում առկա ջրագծին Ø89	տեղ	5	7,155	35,775
96	Միացում առկա ջրագծին Ø40	տեղ	2	4,255	8,510
97	Միացում առկա ջրագծին Ø32	տեղ	3	3,823	11,469
98	Համակարգի լվացում և ախտահանում, ØØ32, 48, 57	կմ	0.47	87,286	41,024
99	Համակարգի լվացում և ախտահանում, Ø89	կմ	0.43	94,481	40,627
100	Համակարգի լվացում և ախտահանում, ØØ108, 110	կմ	1.764	104,784	184,839
101	Համակարգի լվացում և ախտահանում, Ø133	կմ	0.073	131,179	9,576
102	Համակարգի լվացում և ախտահանում, Ø219	կմ	0.19	194,820	37,016
103	Համակարգի լվացում և ախտահանում, Ø273	կմ	0.335	275,074	92,150
104	Համակարգի լվացում և ախտահանում, Ø375	կմ	0.078	455,596	35,536
105	Համակարգի լվացում և ախտահանում, Ø478	կմ	0.05	702,458	35,123
106	Համակարգի լվացում և ախտահանում, Ø530	կմ	2.243	827,580	1,856,262
107	Ճանապարհային ա/բ ծածկի քանդում	մ ³	46.2	5,528	255,394
108	Շինարարական աղբի բարձում, տեղափոխում 2կմ հեռ. Վրա	տն	110.88	2,306	255,689
109	Խճային հիմքի իրականացում h=17սմ	մ ²	462	2,608	1,204,896

110	Բիտումի լցաբաշխում (4,12տ / 1000մ ²)	տն	1.903	434,198	826,279
111	Ծածկի վերականգնում մանրահատիկ ա/բ h=5սմ	մ ²	462	7,040	3,252,480
112	Բնահողերի հետադարձ լիցք ձեռքով	մ ³	600	1,484	890,400
113	Բնահողերի հետադարձ լիցք բուլդոզերով (IIկ)	մ ³	1,630	65	105,950
114	Բնահողերի հետադարձ լիցք բուլդոզերով (IIIկ)	մ ³	8,310	74	614,940
115	Ավազակոպճային նախապատրաստում ավազանի տակ	մ ³	0.5	4,899	2,450
116	Միաձույլ բետոնե ավազանի իրականացում	մ ³	3.1	101,190	313,689
117	Ավազանի հիդրոմեկուսացում բիտումով	մ ²	9.5	1,437	13,652
118	Մետաղական ցանցի կառուցում և տեղադրում	տն	0.0633	711,422	45,033
119	Ճանապարհի հատումներում բետոնից հենարաններ խողովակների տակ	մ ³	1.5	71,253	106,880
1. Ընդամենը					524,651,905
2. Ապամոնտաժման աշխատանքներ					
1	IIIկ. Բնահողի մշակում կողքի կուտակումով	մ ³	4,030	760	3,062,800
2	Բնահողի հետադարձ լիցք բուլդոզերով	մ ³	4,030	74	298,220
3	Պողպատե (St) էլեկտրաեռակցվող խողովակներ Ø530x10,0 ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով	գծ.մ	3,100	2,687	8,329,700
4	Ապամոնտաժված խողովակների տեղափոխում 30կմ հեռ. վրա և դատարկում	տն	396.8	21,262	8,436,762
2. Ընդամենը					20,127,482
3. Ուղղանկյուն ե/բ հորեր (1,5x1,5) H=1,8մ (10 հափ)					
1	Պատերի հիմքերի տակ B7,5 բետոն	մ ³	2.3	45,612	104,908
2	Միաձույլ ե/բ հորերի պատերի կառուցում B15 W4 բետոնով	մ ³	25.6	104,418	2,673,101
3	Ամրան Ø6 A1	տն	0.122	577,226	70,422
4	Ամրան Ø12 AIII	տն	0.135	577,258	77,930
5	Ամրան Ø5 Bp-1	տն	0.665	611,630	406,734
6	Մետաղական ցանց A1 և AIII դասի ամրաններով	տն	0.159	577,265	91,785
7	Միաձույլ ե/բ հորերի հիմքի կառուցում B15 W4 բետոնով	մ ³	11.2	85,931	962,427

8	Ամրան Ø8 A1	տն	0.276	577,274	159,328
9	Ամրան Ø12 AIII	տն	0.284	577,256	163,941
10	Տոփանաձ գրունտ	մ ²	22.5	305	6,863
11	Ցեմենտավազե հարթեցնող շերտ 20մմ	մ ²	22.5	1,291	29,048
12	Խճային հիմք h=20սմ	մ ³	4.5	6,787	30,542
13	Նախապատրաստական շերտ B12,5 դասի բետոնով	մ ³	1.8	47,466	85,439
14	Միաձույլ ե/բ մտոցի իրականացում (B15 W6 բետոն)	մ ³	3.2	220,102	704,326
15	Ամրան Ø5 Bp-1	տն	0.046	611,739	28,140
16	Ամրան Ø6 A1	տն	0.012	576,640	6,920
17	Ամրան Ø12 AIII	տն	0.011	577,001	6,347
18	Մետաղական թիթեղ 10մմ	տն	0.008	769,516	6,156
19	ՄԴ-1 դռնակի պատրաստում և տեղադրում մետաղե պրոֆիլներից	տն	0.67	147,914	99,102
20	Մետաղական թիթեղ 4մմ	տն	0.25	769,150	192,288
21	Անկյունակ 56x36x4, l=0,93մ	տն	0.105	712,950	74,860
22	Շվեյլեր N10	տն	0.313	719,793	225,295
23	Անկյունակ 40x3, l=1,0մ	մ	10	1,669	16,690
24	Ռետինե խողովակ Ø20	մ	36.4	519	18,892
25	Ծխնի	հատ	20	333	6,660
26	Փական	հատ	10	2,224	22,240
27	Հիդրոմեկուսացում 2 շերտ բիտումե մածիկով	մ ²	171.2	154.62	26,471
28	Մետաղական պատյան խողովակ Ø325x4,5 l=200մմ	հատ	20	7,899	157,980
29	Մետաղական պատյան խողովակ Ø100x3,0 l=200մմ	հատ	10	1,144	11,440
30	ՄԵ-1 ելարան մետաղական պրոֆիլներից	տն	0.2407	95,761	23,050
31	Ամրան Ø18 AIII	տն	0.072	577,302	41,566
32	Անկյունակ 50x4	մ	52	2,594	134,888

33	Մետաղական տարրերի ներկում 2 անգամ	տ	9.107	18,360	167,205
34	Հավաքովի ե/բ ծածկի սալերի մոնտաժում (B15, W4 բետոն)	մ ³	5.2	110,914	576,753
35	Ամրան Ø10 AIII	տն	0.205	584,147	119,750
3. Ընդամենը					7,529,482
4. Ուղղանկյուն ե/բ հորեր (1,0x1,0) H=1,8մ մկոցով (15 հալ)					
1	IIIկ. բնահողի մշակում ձեռքով	մ ³	150	2,903	435,450
2	Հետլիցք ձեռքով	մ ³	45	1,483	66,735
3	Բնահողի համահարթեցում	մ ²	60	264	15,840
4	Խճային հիմք h=20սմ	մ ³	6	6,784	40,704
5	Միաձույլ բետոնե հորի իրականացում հավ. բ. ծածկի սալով (B-15, W6 բետոն)	մ ³	54.9	101,189	5,555,276
6	Հավ. ե/բ սալեր թուջե կափարիչով	հատ	15	151,627	2,274,405
7	Կարճախողովակ Ø245x3,0, L=300մմ	մ	9	20,402	183,618
8	Ամրան Ø8 AI	կգ	14.4	578	8,323
4. Ընդամենը					8,580,351
5. Ուղղանկյուն ե/բ հորեր (1,0x1,0) H=1,2մ մկոցով (3 հալ)					
1	IIIկ. բնահողի մշակում ձեռքով	մ ³	21	2,903	60,963
2	Հետլիցք ձեռքով	մ ³	9	1,483	13,347
3	Բնահողի համահարթեցում	մ ²	12	264	3,168
4	Խճային հիմք h=20սմ	մ ³	1.2	6,787	8,144
5	Միաձույլ բետոնե հորի իրականացում հավ. բ. ծածկի սալով (B-15, W6 բետոն)	մ ³	7.98	101,189	807,488
6	Հավ. ե/բ սալեր թուջե կափարիչով	հատ	3	151,628	454,884
7	Կարճախողովակ Ø245x3,0, L=300մմ	մ	1.8	21,881	39,386
8	Ամրան Ø8 AI	կգ	2.88	580	1,670
5. Ընդամենը					1,389,051
ԱՄԲՈՂՋԸ					562,278,271

Չափաբաժին 2

**Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի շրջանակներում
Թալին-Գյումրի (Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի) ճանապարհահատվածում առկա էլեկտրական
օղային գծերի տեղափոխման աշխատանքների**

Հ/հ	Աշխատանքների անվանում	Չափ. միավորը	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
0.4 կՎ-ի օղային և մալուխային գծեր					
1	Ե/բետոնե խարսխային հենասյուն K-1 CB-105-2 հենակներից 1 հատ - 1180 կգ	հատ	22	217,964	4,795,208
2	Ե/բետոնե-միջանկյալ հենասյուն CB-95 - 2 հենակներից Պ1-4	հատ	12	127,314	1,527,768
3	Ե/բետոնե անկյուն-միջանկյալ հենասյուն CB-105-2, հենակներից ՄՊ1-4 L=9.0 մ	հատ	2	127,315.5	254,631
4	Փայտյա հենասյուների ապամոնտաժում	հատ	19	60,023	1,140,437
5	Լարի անցկացում (4 լար) 1120x4=4480 մ	գծմ	1,120	385	431,200
6	A-35 լարի արժեքը 1մ - 0,095կգ	կգ	425	2,984	1,268,200
7	A-35 լարի ապամոնտաժում 2400 մ=600x4	գծմ	600	96	57,600
8	ABBF-1կՎ 4x50 մմ ² հատվածքով մալուխի անցկացում	գծմ	525	3,145	1,651,125
9	Լայնակ TH-2, 1 հատ - 2.7 կգ (72 հատ)	կգ	194.4	738	143,467
10	Խամուտ (X12 - 48 հատ՝ 1 հատ -1,3կգ: X10 - 24 հատ՝ 1 հատ -1,2կգ.)	հատ	72	2,760	198,720
11	Մեկուսիչ ТФ-20	հատ	144	915	131,760
12	Գլխադիր К-5, 1 հատ - 0.01 կգ	հատ	144	273	39,312
13	Սեղմիչ ПС-1, 1 հատ - 0.4 կգ	հատ	36	722	25,992
14	Սեղմիչ ПА1,ПА2, 1 հատ - 0.4 կգ	հատ	124	658	81,592
15	Ø100 մմ մետաղական խողովակի տեղադրում ստորգետնյա	գծմ	510	8,696	4,434,960
16	Պողպատ կլոր Ø10 մմ, 1 մ - 1.58 կգ	գծմ	240	1,268	304,320
17	Կայմային 4KH-ТП տիպի կցորդիչ 35/50 մմ ²	հատ	28	55,402	1,551,256
18	Վենտիլային պարպիչ PBH-10	հատ	56	11,456	641,536
19	Ø100 մմ մետաղական խողովակի տեղադրում հենասյան վրա	գծմ	140	8,696	1,217,440
20	Խրամուղու փորում 4-րդ կարգի բնահողում էքսկավատորով բարձելով ա/ինքնաթափի վրա	մ ³	46.4	1,268	58,835
21	Խրամուղու փորում 4-րդ կարգի բնահողում էքսկավատորով կողլիցք	մ ³	154.60	995	153,827
22	Ավելորդ բնահողի տեղափոխում 2կմ հեռ. վրա	տն	90.48	1,508	136,444

23	Հետադարձ լիցք տեղի բնահողով բուլդոզերով տեղափոխելով 10մ և տոփանում	մ³	154.60	449	69,415
24	Ավազից անկողնակի պատրաստում	մ³	46.40	5,535	256,824
25	Գոյություն ունեցող ա/բետոնե ծածկույթի քանդում ներառյալ նախաշերտերը	մ³	7	2,951	20,657
26	Շինաղբի բարձում ձեռքով ա/ինքնաթափի վրա և տեղափոխում 2կմ	տն	14	2,391	33,474
27	Խճային հիմքի իրականացում h=16սմ հատությամբ	մ²	28	2,647	74,116
28	Խոշորահատիկ ա/բետոնե ծածկույթի պատրաստում 6 սմ հատությամբ	մ²	28	7,974	223,272
29	Մանրահատիկ ա/բետոնե ծածկույթի պատրաստում 3 սմ հատությամբ	մ³	28	4,733	132,524
Ընդամենը					21,055,913
10 կՎ-ի օդային և մալուխային գծեր					
1	Երկաթ բետոնյա հենարանների տեղադրում Պ10-1 (CB105 -3,5) (միջանկյալ)	հենարան	115	207,014	23,806,610
2	Երկաթ բետոնյա հենարանների տեղադրում ՄՊ10-1 (CB105 -3,5) (անկյունային միջանկյալ)	հենարան	19	433,452	8,235,588
3	Երկաթ բետոնյա հենարանների տեղադրում A10-1 (CB105 -3,5) (խարսխային)	հենարան	74	554,313	41,019,162
4	Երկաթ բետոնյա հենարանների տեղադրում ՄA10-1 (CB105 -3,5) (անկյունա - խարսխային)	հենարան	7	749,296	5,245,072
5	Երկաթ բետոնյա հենարանների տեղադրում OA10-1 (CB105 -3,5) (խարսխային ճյուղավորման)	հենարան	2	566,745	1,133,490
6	Երկաթ բետոնյա հենարանների տեղադրում A10/0.38 (CB105 -3,5) (խարսխային)	հենարան	1	701,974	701,974
7	KP-1 տիպի բաժանիչի տեղադրում ծայրային հենարանի վրա	կետ	2	143,247	286,494
8	Գերլարման սահմանափակիչի տեղադրում (3 հատ) ե/բետոնյա հենարանի վրա ՕՊԻ-10	լրակազմ	68	50,978	3,466,504
9	Ճառագայթային հողանցման իրականացում ճառագայթի երկարությունը մինչև 25մ հողաթիթեղի տեղադրումը տրակտորով	գծմ	2,100	773	1,623,300
10	Հաղորդալարերի կախում երբ հենարանների քանակը 1կմ ԲԳ մինչև 20, բնակեցված տեղանք, AC 50/8 (10 կՎ ՕԳ)	կմ (3լար)	1.019	1,767,214	1,800,791
11	Ասֆալտ - բետոնե ծածկույթների քանդում	մ³	10.79	5,187	55,968
12	Ճանապարհի խճային ծածկույթների քանդում	մ³	13.28	674	8,951
13	Մեկշերտանի հիմնատակի իրականացում 15 սմ հաստ. 40-70մմ չափաբաժնի բազալտե խճից	մ²	83	1,724	143,092
14	Խոշորահատիկ ասֆալտբետոնե խառնուրդից ծածկույթի իրականացում 4 սմ հատությամբ	մ²	83	5,386	447,038
15	Մանրահատիկ ասֆալտբետոնե խառնուրդից ծածկույթի իրականացում 4 սմ հատությամբ	մ²	83	7,764	644,412

16	Գրունտի մշակում թրթուրավոր և անիվային էքսկավատորներով՝ կողլիցք, 4-րդ կարգի գրունտում	մ³	582	926	538,932
17	Գրունտի լրամշակում ձեռքով 4-րդ կարգի գրունտում	մ³	145.20	17,547	2,547,824
18	Խրամուղիների և փոսորակների ետլիցք, բուլդոզերով, տեղափոխում մինչև 5 մ 3-րդ կարգի գրունտում	մ³	517	70	36,190
19	Գրունտի խտացում օդաճնշական տոփանիչով գրունտ 3-4 կարգի	մ³	517	355	183,535
20	Քանդած գրունտի բարձում ի/թ մեքենային վրա	մ³	210	2,050	430,500
21	Գրունտի տեղափոխում 5կմ հեռ. վրա	տն	409.50	2,006	821,457
22	Հողային աշխատանքների կատարում թափոնակույտում	մ³	210	58	12,132
23	Անկողնակի պատրաստում մեկ խողովակի համար խրամուղում	գծմ	1,865	683	1,273,795
24	Անկողնակի պատրաստում մեկ մալուխի համար խրամուղում	գծմ	430	522	224,460
25	AC5 - 10 3*95 տիպի մալուխ՝ մինչև 35կվ պատրաստի խրամուղիներում առանց ծածկի, զանգ, 1մ մինչև 6կգ	գծմ	438.60	8,758	3,841,259
26	ՊՎՔ խողովակի տեղադրում խրամուղում, տրամ.160մմ (1865մ պահուստային)	գծմ	2,730	1,995	5,446,350
27	AC5 - 10 3*95 տիպի մալուխի մինչև 35կվ, երկարաձգվող խողովակների, բլոկների, սակառների մեջ զանգված 1մ մինչև 6կգ	գծմ	1,902.3	8,791	16,723,119
28	ՊՎՔ խողովակի տեղադրում հենասյան երկայնքով, տրամ.160մմ	գծմ	630	8,820	5,556,600
29	AC5 - 10 3*120 տիպի մալուխի մինչև 35կվ, երկարաձգվող խողովակների, բլոկների, սակառների մեջ զանգված 1մ մինչև 6կգ	գծմ	796	10,003	7,958,387
30	Հաղորդալարերի ապամոնտաժում, երբ հենարանների քանակը 1կմ ԲԳ 20-ից ավել, ոչ բնակեցված տեղանք AC35 (վերադարձ պահեստ)	կմ (3լար)	6.656	119,653	796,410
31	Հաղորդալարերի ապամոնտաժում, երբ հենարանների քանակը 1կմ ԲԳ 20-ից ավել, ոչ բնակեցված տեղանք AC 50/8 (վերադարձ պահեստ)	կմ (3լար)	2.14	119,650	256,051
32	Հաղորդալարերի կախում երբ հենարանների քանակը 1կմ ԲԳ մինչև 20, բնակեցված տեղանք, AC35	կմ (3լար)	9.083	1,343,699	12,204,818
33	Հաղորդալարերի կախում երբ հենարանների քանակը 1կմ ԲԳ մինչև 20, բնակեցված տեղանք, AC 50/8	կմ (3լար)	2.091	1,694,416	3,543,024
34	Փայտյա հենարանների ապամոնտաժում (վերադարձ պահեստ)	հենարան	153	10,760	1,646,280
35	Եռաբևեռ գծային բաժանիչ РЛНД1-10/400Y1	հատ	2	243,965	487,930
36	Գերլարման սահմանափակիչի ОПН - 10	հատ	204	36,595	7,465,380
Ընդամենը					160,612,879

110 կվ ՕԳ «Լանջիկ» ՊԿ 781 + 30

1	3տ խարսխի տեղադրում 4-րդ կարգի գրունտում	խար.	2	205,149	410,298
2	Երեք հաղորդալարերի ապամոնտաժում ՕԳ 110 կվ կտր. մինչև 240մմ ² խարսխային թռիչքի երկարությունով մինչև 1կմ	կմ 3հ	0.22	242,705	53,395
3	Մեկ շանթապաշտպանված մետաղաճուղի ապամոնտաժում ՕԳ 35-500կվ խարսխային թռիչքի երկարությունով մինչև 1 կմ	կմ 16.	0.22	41,278	9,081
4	3 հատ AC-150/24 հաղորդալարի ապամոնտաժում ճանապարհի անցումով խարսխային թռիչքում	անց. 3հ.	1	28,813	28,813
5	Ճուղանի ապամոնտաժում 1 հատ 10կվ ՕԳ-ի, 1 հատ ճանապարհի անցումով խարսխային հենարանների թռիչքում	անց. 16.	1	28,816	28,816
6	Երեք հաղորդալարերի կախոց ՕԳ 110կվ կտր. մինչև 240մմ ² խարսխային թռիչքի երկարությունով մինչև 1կմ	կմ 3հ	0.24	485,442	116,506
7	Մեկ շանթապաշտպանված մետաղաճուղի կախոց ՕԳ 35-500կվ խարսխային թռիչքի երկարությունով մինչև 1 կմ	կմ 16.	0.24	82,481	19,795
8	3 հատ BT-150/24 հաղորդալարի մոնտաժում ճանապարհի անցումով խարսխային հենարանների թռիչքում	անց. 3հ.	1	587,648	587,648
9	1 հատ ճուղանի մոնտաժում ճանապարհի անցումով խարսխային հենարանների թռիչքում	անց. 16.	1	57,627	57,627
10	Խարսխաանկյունային ազատ կանգնած հենարանների ապամոնտաժում , պողպատե, միականգնակի ,մինչև 5տ զանգվածով	տն	4.19	111,691	467,985
11	Երկաթբետոնե ոչանջատովի հենատակերի ապամոնտաժում խարսխաանկյունային հենարանների տակ,ծավալը մինչև 1,5մ ³ ՕԳ 110-220կվ -ի համար	խմ	4.4	76,018	334,479
12	Երկաթբետոնե ոչանջատովի հենատակերի տեղակայում ապամոնտաժում խարսխաանկյունային հենարանների տակ, ծավալը մինչև 1,5մ ³ ՕԳ 110-220կվ -ի համար	խմ	4.4	95,021	418,092
13	Խարսխաանկյունային ազատ կանգնած հենարանների տեղակայում , պողպատե, միականգնակի ,մինչև 15տ զանգվածով	տն	6.72	119,597	803,692
14	Մետաղյա հենարանների բեռնում և բեռնաթափում	տն	10.91	9,280	101,245
15	Ե/բ հիմքերի բեռնում և բեռնաթափում	տն	21	9,230	193,830
16	Մեկուսիչների և գծային արմատուրայի բեռնում և բեռնաթափում	տն	1	3,424	3,424
17	Բեռների տեղափոխում ճանապարհով	տն	32.91	16,861	554,896
Ընդամենը					4,189,623

Նյութեր

1	Հաղորդալար AC-150/24	տն	0.07	2,527,913	176,954
---	----------------------	----	------	-----------	---------

2	Ճոպան C- 50	գծմ	70	635	44,450
3	Մետաղյա հենարաններ	տն	6.72	1,065,035	7,157,035
4	Մեկուսիչների ձգվող շարան 20x ПС70 - E	շար.	6	188,916	1,133,496
5	Ե/բ հիմք Ф2-Фy	հատ	2	389,319	778,638
6	Ե/բ հիմք Ф3-Фy	հատ	2	566,205	1,132,410
7	Մերակների միացման սեղմակ ПА- 4 - 1Б	հատ	12	4,756	57,072
8	Սեղմակ СОАС - 150 - 2А	հատ	4	21,634	86,536
9	Սեղմակ CBC - 50 - 1	հատ	2	7,924	15,848
10	Հողանցման մետաղ d= 12մմ	տն	0.04	493,696	19,748
Ընդամենը					10,602,187
«Լանջիկ» 110 կվ ՕԳ ՊԿ 792+90					
1	Երեք հաղորդալարերի ապամոնտաժում ՕԳ 35 կվ կտր. մինչև 150մմ² խարսխային թռիչքի երկարությունով մինչև 1կմ	կմ 3h	0.22	257,186	56,581
2	Մեկ շանթապաշտպանված մետաղաճոպանի ապամոնտաժում ՕԳ35-500կվ խարսխային թռիչքի երկարությունով մինչև 1 կմ	կմ 16.	0.22	42,288	9,303
3	3 հատ БТ-150/24 հաղորդալարի ապամոնտաժում ճանապարհի հատումով միջանկյալ հենարանների թռիչքում	անց. 3h	1	199,047	199,047
4	Շանթապաշտպանված ճոպանի ապամոնտաժում թռիչքում միջանկյալ հենարանների միջով անցումների վրա խճուղու միջով, ՕԳ մինչև 10կվ և կապի գծեր	անց. 16.	1	23,821	23,821
5	Գրունտի մշակում թրթուրավոր և անիվային էքսկավատորներով կողլիցք, 5-րդ կարգի գրունտում	խմ	120	886	106,320
6	Խրամուղիների և փոսորակների ետլիցք բուլդոզերով, տեղափոխելով մինչև 5մ, 3-րդ կարգի գրունտում	խմ	110	72	7,920
7	Տարածքի համահարթում բուլդոզերով	քմ	110	5	550
8	Խճից հիմնատակի պատրաստում հիմքերի տակ	խմ	2.8	2,824	7,907
9	IX- րդ կարգի ժայռագրունտների փխրեցում պայթանցքային եղանակով, հանքաստիճանի բարձրությունը 0.5մ-ից ավել	խմ	8.4	278,841	2,342,264
10	Խարսխաանկյունային ազատ կանգնած հենարանների տեղակայում , պողպատե, միականգնակի ,մինչև 15տ զանգվածով	տն	13.3	121,410	1,614,753
11	Երեք հաղորդալարերի կախոց ՕԳ 35կվ կտր. մինչև 150մմ² խարսխային թռիչքի երկարությունով մինչև 1կմ	կմ 3h	0.49	515,901	252,791
12	Մեկ շանթապաշտպանված մետաղաճոպանի կախոց ապամոնտաժում ՕԳ35-500կվ խարսխային թռիչքի երկարությունով մինչև 1 կմ	կմ 16.	0.49	84,581	41,445
13	Երեք հաղորդալարերից կախոց անցումների վրա խճուղու միջով, ՕԳ մինչև 10կվ, կապերի գծերի	անց. 3h	1	678,685	678,685

	միջով ՕԳ 110կվ համար				
14	Շանթապաշտպանված ճոպանի կախոց խարխսխային թռիչքում անցումների վրա խճուղու միջով , ՕԳ մինչև 10կվ և կապի գծեր	անց. 16.	1	58,578	58,578
15	Գրունտի մշակում բուլդոզերով, տեղափոխելով այն մինչև 10մ 4-րդ կարգի գրունտում	խմ	250	321	80,250
16	Ավելացնել ամեն հաջորդ 10մ բուլդոզերով տեղափոխելու համար	խմ	251	269	67,519
17	Բեռնում և բեռնաթափում մետաղյա հենարանների ՕԳ ուղեգծի վրա	տն	13.4	9,367	125,518
18	Բեռնում և բեռնաթափում երկաթբետոնե հիմքերի ՕԳ ուղեգծի վրա	տն	21	9,333	195,993
19	Խճի բեռնում և բեռնաթափում ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ	տն	5.6	1200	6,720
20	Բեռնում և բեռնաթափում մեկուսիչների ՕԳ ուղեգծի վրա	տն	0.92	3566	3,281
21	Բեռների տեղափոխում ճանապարհով	տն	40.9	16974	694,237
Ընդամենը					6,573,483
Նյութեր					
1	Հաղորդալար ԵՏ-150/24	տն	0.28	2,527,915	707,816
2	Ճոպան T- 50	գծմ	150	634	95,100
3	Մետաղյա հենարաններ	տն	13.26	1,065,036	14,122,377
4	Ե/բ հիմք Փ1-Ե	հատ	6	144,305	865,830
5	Ե/բ հիմք Փ2-Ե	հատ	2	183,230	366,460
6	Խճաքար	խմ	2.8	2,124	5,947
7	Հողանցման մետաղ d= 12մմ	տն	0.086	493,696	42,458
8	Մեկուսիչների ձգվող շարան 10ս ՍՏ 70 - E	շար.	6	128,480	770,880
9	Մեկուսիչների ձգվող երկշերթ շարան 2ս ՍՏ 70 - E	շար.	6	228,495	1,370,970
10	Ճոպանի ձգվող ամրացում ՍՏ 70 - E մեկուսիչով	ամր.	2	24,772	49,544
Ընդամենը					18,397,383
«Լանջիկ» 110 կվ ՕԳ ՊԿ 827 + 36					
1	3 տ խարսխի տեղադրում 5-րդ կարգի գրունտում	խար.	4	206,341	825,364
2	Երեք հաղորդալարերի ապամոնտաժում ՕԳ 110կվ կտր, մինչև 240 մմ ² խարխսխային թռիչքի երկարությունով մինչև 1կմ	կմ 3հ	0.48	242,721	116,506
3	Մեկ շանթապաշտպանված մետաղաճոպանի ապամոնտաժում ՕԳ35-500կվ խարխսխային թռիչքի երկարությունով մինչև 1 կմ	կմ 16.	0.48	41,240	19,795
4	3 հատ AC-150/24 հաղորդալարի ապամոնտաժում ճանապարհի անցումով խարխսխային թռիչքում	անց. 3հ	1	294,174	294,174

5	Ճոպանի ապամոնտաժում ճանապարհի անցումով խարսխային թռիչքում	անց. 16.	1	28,813	28,813
6	Երեք հաղորդալարերի կախոց ՕԳ 110կվ կտր, մինչև 240մմ ² խարսխային թռիչքի երկարությունով մինչև 1 կմ	կմ 3հ	0.48	485,442	233,012
7	Մեկ շանթապաշտպանված մետաղաճոպանի կախոց ՕԳ35-500կվ խարսխային թռիչքի երկարությունով մինչև 1 կմ	կմ 16.	0.48	82,513	39,606
8	3 հատ AC-150/24 հաղորդալարի մոնտաժում ճանապարհի անցումով խարսխային հենարանների թռիչքում	անց. 3հ	1	430,157	430,157
9	C- 50 Ճոպանի կախոց ճանապարհի անցումով խարսխային թռիչքում	անց. 16.	1	57,627	57,627
10	VI-VII կարգի ժայռագրությունների փխրեցում պայթանցքային եղանակով, հանքաստիճանի բարձրությունը 0.5մ (տարածքի հարթեցում)	խմ	112	2,990	334,880
11	Խարսխաանկյունային ազատ կանգնած հենարանների ապամոնտաժում, պողպատե, միականգնակի, մինչև 5տ զանգվածով	տն	3	83,117	249,351
12	Երկաթբետոնե ոչանջատովի հենատակերի ապամոնտաժում խարսխաանկյունային հենարանների տակ,ծավալը մինչև 1,5մ ³ ՕԳ 110-220կվ -ի համար	խմ	4	45,383	181,532
13	VII- րդ կարգի պայթանցքային եղանակով փխրեցված գրունտի ոչգաբարիտային կտորների մանրացում էքսկավատորով կամ բուլդոզերով	խմ	112	28	3,136
14	Գրունտի մշակում թրթուրավոր և անիվային էքսկավատորներով կողիցք, 5-րդ կարգի գրունտում	խմ	112	902	101,024
15	Խրամուղիների և փոսորակների ետլիցք, բուլդոզերով , տեղափոխում մինչև 5 մ 3-րդ կարգի գրունտում	խմ	102	73	7,446
16	Տարածքի համահարթում բուլդոզերով	քմ	100	5	500
17	Խճից հիմնատակի պատրաստում հիմքերի տակ	խմ	2.6	2,761	7,179
18	Երկաթբետոնե ոչանջատովի հենատակերի տեղակայում խարսխաանկյունային հենարանների տակ,ծավալը մինչև 1,5մ ³ ՕԳ 110-220կվ -ի համար	խմ	8	90,762	726,096
19	Խարսխաանկյունային ազատ կանգնած հենարանների տեղակայում, պողպատե, միականգնակի, մինչև 15տ զանգվածով	տն	13.43	119,595	1,606,161
20	Միջանկյալ պողպատե հենարանների ապամոնտաժում, միականգնակի ազատ կանգնած, մինչև 3տ զանգվածով	տն	2.6	55,197	143,512
21	Երկաթբետոնե ոչանջատովի հենատակերի ապամոնտաժում միջանկյալ ազատ կանգնած հենարանների տակ,ծավալը մինչև 06մ ³ ՕԳ 110-150կվ -ի համար	խմ	2.16	39,997	86,394
22	Մետաղյա հենարանների բեռնում և բեռնաթափում	տն	19.34	9,280	179,475
23	Ե/բ հիմքերի բեռնում և բեռնաթափում	տն	35.4	9,230	326,742

24	Մեկուսիչների բեռնում և բեռնաթափում	տն	1	3424	3,424
25	Խճաքարի բեռնում և բեռնաթափում	տն	5	2298	11,490
26	Բեռների տեղափոխում ճանապարհով	տն	61	16861	1,028,521
Ընդամենը					7,041,917
Նյութեր					
1	Հաղորդալար AC-150/24	տն	1.26	2,527,913	3,185,170
2	Ճոպան T- 50	գծմ	700	634	443,800
3	Մետաղյա հենարան	տն	13.4	1,065,036	14,271,482
4	Ե/բ հիմք Ф2-у	հատ	8	389,315	3,114,520
5	Խճաքար	խմ	2.6	2,124	5,522
6	Ամոնիտի փոշի	կգ	85.5	1,173	100,292
7	Էլեկտրողետոնատոր	հատ	405	285	115,425
8	Թագագլխիկ	հատ	1	4,945	4,945
9	Պայթեցման լար	գծմ	10.19	111	1,131
10	Մեկուսիչների ձգվող շարան 10х ПС 70 - Д	շար.	6	76,281	457,686
11	Մեկուսիչների ձգվող շարան 20х ПС 70 - Д	շար.	6	188,920	1,133,520
12	Ճոպանի ձգվող ամրացում ПС- 70 - Д մեկուսիչով	ամր.	2	24,766	49,532
13	Սեղմակ ПА - 4 - 1Б	հատ	12	4,755	57,060
14	Հողանցման մետաղ d= 12մմ	տն	0.09	493,696	44,433
Ընդամենը					22,984,518
«Լանջիկ» 110 կվ ՕԳ ՊԿ 919 + 24					
1	3 տոննանոց խարսխի տեղադրում 4-րդ կարգի գրունտում	խար.	2	205,149	410,298
2	Երեք հաղորդալարերի ապամոնտաժում ՕԳ 110կվ կտր, մինչև 240 մմ² խարխախային թռիչքի երկարությունով մինչև 1կմ լեռնային պայմաններում	կմ3հ	0.5	344,209	172,105
3	Մեկ շանթապաշտպանված մետաղաճոպանի ապամոնտաժում ՕԳ35-500կվ խարսխային թռիչքի երկարությունով մինչև 1 կմ լեռնային պայմաններում	կմ 16	0.5	60,670	30335
